

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Նոյեմբեր ամսուան ընթացքին Ս. Աթոռոյս Տօնօրէն ժողովը ի նիստ գումարուեցաւ իրրեւ վարչական մարմին տասն անգամ, իսկ Առաւմտաւոր խորհուրդէն բարգմանութեան հասնեալներէն զարադարձ յորդիկն Կեդրոնական Յանձնաժողովը երկու անգամ, իւրաքանչիւրը զբաղելով իր իրաւասութեան մէջ հեղած խնդիրներով:

Յր. 3 Նոյ. — Ս. Պատրիարքին այցելեց Մեկերիկներու մեծաւորը և հաղորդեց թէ իրենց պատրիարքը առաջիկայ հինգշաբթի պիտի հասնի Յոպոլէ, յաջորդ կիրակին ևս նորաչէն եկեղեցւոյ մը օծումը կատարելու համար:

— Ս. Պատրիարքին այցելեց Ե. Ք. Ընկ. կրօնի ուսուցիչը, ընկերակցութեամբ տեղւոյս Նոյն հաստատութեան փոխ տեսչին և տեղեկութիւններ տուաւ իրենց աշխատութեանց մասին:

— Երեկոյին, վարժարանին մէջ տեղի ունեցաւ վիճարանական երեկոյթ, մասնակցութեամբ երիցագոյն սարկաւազաց դասարանին:

Յր. 4 Նոյ. — Սրբոց Յակոբեանց Մայր տաճարին մէջ քարոզեց Տ. Սերոփէ վրդ. Սիրեպեա զընկեր քո իրրեւ զանաւ քոս բնարանով, բացատրեց թէ անմին ճշմարիտ սէրը ընկերոջ սիրոյն մէջ միայն կրնայ արտայայտուիլ, վասն զի ընկերակցութիւնը Քրիստոնէական բարոյականի ամենէն անհրաժեշտ պարտականութիւնն է:

Յր. 8 Նոյ. — Ս. Պատրիարքին կողմէ Տ. Շաւարշ վրդ. մեկնեցաւ Յոպոլէ, ընկերակցութեամբ տեղւոյն տեսուչ Տ. Ներսէս վրդ.ի, զի մատուցելու համար Մեկերիկ պատրիարքը:

Յր. 10 Նոյ. — Մեկերիկներու Ս. Քաղաքի մեծաւորը երեք վարդապետներու ընկերակցութեամբ, Ս. Պատրիարքին շնորհակալութեան այցելութիւն մը տուաւ, Յոպոլէ պատուիրակ զրկած ըլլալուն համար:

— Երեկոյեան, Ս. Պատրիարք շայր և Միւսարանութիւնը հրաշափառի թափօրով մուտք գործեցին ի Ս. Յարութիւն, և Փրկչի գերեզմանին առջև կանոնական ուխտ կատարելէ վերջ, կիրակնամուտքի ժամերգութիւնը պաշտելին հայապատկան Ս. Լուսաւորիչ հինաւորաց տաճարին մէջ:

Յր. 11 Նոյ. — Գլխավորին և առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Լուսաւորիչ. ներկայ էր խառն բաղմունքին ժողովրդական: Ս. Պատրիարքը օրուան տօնին առթիւ հակիրճ բայց տպաւորիչ քարոզ մը խօսեցաւ, Նոյն ատեն «Լուսաւորիչ Լուսայ» ին հանգանակութեան այս տարւոյ բացումը յայտարարեց, հաղորդելով հանգանակիչ մարմիններու անգա-

մաց անուանները: Ս. Պատրիարքին վերջ կազմուեցաւ հանդիսաւոր թափօրը, Ս. Պատրիարքը զիւր խաչի ստորեկրկեայ սեղանէն վերերկրելով կենաց փայտի մատուները պարունակող խաչը անցաւ թափօրի գլուխը ամպշօմանին ներքեւ, թափօրը երեք անգամ Փրկչի Գերեզմանին շուրջ դարձաւ ի ներկայութեան ազգայնաց և օտարներու: — Զինադադարի մէջ տարեկարծին առթիւ Ս. Պատրիարքին կողմէ՝ փոխանորդ Տ. Մկրտիչ Եպս. Ազաւեանին և Ս. Տեղեաց քարտուղար Տ. Շաւարշ վրդ. առաւօտուն դնային ներկայ զրաւնայ սգահանդէս պաշտօնական մեծ արարողութեան, որ տեղի ունեցաւ երեսօղակի զինաւորական մեծ զերեկամատան մէջ:

Յր. 13 Նոյ. — Ս. Քաղաքի Գերման բողոքականաց հովիւ Տ. Էրնէսթ Լայն այցելեց Ս. Պատրիարք շօր և տեղեկութիւններ հաղորդեց Գերմանիա համալսարանական կրթութեան զբեկուիչք ուսանողի խնդրոյն մասին:

— Տ. Սերոփէ վրդ. մեկնեցաւ Յոպոլէ՝ տեղւոյն տեսուչին հետ կատարելու համար Լուսաւորիչ Լուսայի հանգանակութիւնը, Նոյն քաղաքին և Ռամէլի մէջ: Իսկ վանքարեան և քաղաքարեան ազգայնաց մօտ Նոյն հանգանակութիւնը շօր օրերէ ի վեր կը կատարուի պատկանեալ մասնաճիւղերու միջոցաւ:

Յր. 17 Նոյ. — Ժառանգաւորաց քրահին մէջ երեկոյիս բանախօսեց Տ. Տիբան վրդ., օրէնք և ազատութիւն նիւթին վրայ:

Յր. 18 Նոյ. — Մայր տաճարին մէջ քարոզեց Տ. Շաւարշ վրդ. «Երանի՜ որ քաղցեալ և ծարաւի իցին արդարութեան, զի նոքա յաղեացին»: Բացատրեց արդարութեան զգացումին վանմութիւնը, ու զայն կիրարկելով արդարութեան քաղցն ու ծարաւ ունեցող հայութեան, բնաւ թէ ա՛ն ալ պիտի յաղենայ:

— Տ. Եղիշէ վրդ. ընկերակցութեամբ Յարութիւն սարկաւազի՝ մեկնեցաւ Ամման, Անգր-յորդանանու նորակազմ տեղական խորհուրդին հաստատութեան պատրիարքական կոնդակը տանելու և քարոզութեան պարտականութեամբ:

Յր. 25 Նոյ. — Ս. Յարութեան վերնայարկ մատրան մէջ քարոզեց Տ. Շայրիկ վրդ. «Ի՞նչ ևս թագաւոր չըլից» բնարանով. բացատրեց երկրաւոր ևս հոգեւոր թագաւորութիւններու տարբերութիւնը ևս ջոյց տուաւ վերջինին զերազանցութիւնը, հիմունած ըլլալով սիրոյ և զոհողութեան գաղափարին վրայ:

Յր. 26 Նոյ. — Տ. Մեսրոպ Սրբազան՝ Ս. Պատրիարք շօր կողմէ մեկնեցաւ Ամման ի շնորհաւորութիւն տեղւոյն վեհապետ Իմիր Ապտալ-լահի իր գահածառնեց օրդւոյն հարսանեաց առթիւ:

Յր. 28 Նոյ. — Ս. Պատրիարք շօր կողմէ Տ. Կիրակի և Տ. Սերոփէ վարդապետներ գային ներկայ գտնուիլ երեսօղակի ազգական Քրիստոնէական Ընկերութեան տարեկան պաշտարին:

Proprietor — His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor — Father Karekine Bulbulian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

